

ԴՐԱԽՈՍԱԿԱՆ

ՆՇԱՆ Պէ՛՛ԵԿԹԱՌԱՆ՝ «Ծաղրանկարներ», ծանօթ դէմքեր,
Ժողովրդական տիպեր, 1938, Փարիզ, 208 էջ

Զարմանք բան. քէեւ ամենիս համար, կարծես, արդէն ընդհանուր տեղիք է դարձած այն միտք, թէ հայ գրականուրիւնը արտասահմանում դատապարտած է մահիան, թէ իմբնուրոյն ազգային գրականուրիւնը կարող է գոյուրիւն ունենալ միայն Մայր Հայրենիքում, բայց, հակառակ դրան, գրականուրիւնը այնուն, Հայաստանում, այսօր ապրում է հոգեվարքի օրեր (անշուշտ, վաղը, ազատ պայմաններում, պիքորդն ծաղկելու համար), մինչ այստեղ, օտարուրեան մէջ, կինսութակուրեան ու վերելիք զմայլելի ապացոյցներ է տալիս: Ճին ու դեռ ստեղծագործող գրողների կողքին ծննում ու հասութանում են անվիճելի տաղանդով օժտած երիտասարդ ուժեր, որոնք արտասովոր սիրով ու խամբավառութեամբ փարած են հայ մշակոյրին: Համաստեղի, Շահնուրի, Նարդումիի, Ճ. Զարդարեանի, Պէշիկրաշլեանի պէս գրականուրեան մէջ ուրոյն տեղ եւ անուն ձեռք թերած նորի կողքին ծննենք արդէն տաղանդաւոր յաջորդներ մատաղ սերնդից: Իրաք յետեւից լոյս են տեսնում լիարժեք հասորներ, որոնց նախնական կարող են նայել Հայաստանի դժբախտ գրողները: Հատորներ, որոնք մտքի ու նաշակի բարձր մշակոյր եւ ակեյայտնի յառաջդիմուրիւն են յայտնաբերում:

Այս կարգի հասորներից է եւ Ն. Պէշիկրաշլեանի վերջին գիրքը՝ «Ծաղրանկարներ»:

Դ. Պէշիկրաշլեանը բազմակողմանի և թեղուն գրող է: Նրա գրչի տակից դուրս են եկել եերբւածներ, պատմական վէպեր, երգիծանեք, քաներգուրիւն, կինսագրուրիւններ, ուսումնասիրութիւններ, լրագրական յօդածններ: Թերեւ այս առառուրիւնն է պատճառ, որ նրա գրածները միեւնոյն արժէքը չունեն. նա արտադրել է շատ գրական գոհարներ, որոնք սակայն, յանախ, քաղաքածների մէջ: Դոյն իսկ միեւնոյն երկում պատահում են սխանչելի էջերի կողքին նաեւ հայթեպով շարադրւած տժդոյն կտրներ: Եւ որքան երկը ընդարձակ է, այնքան քերուրիւնները՝ շատ: Ընդհակառակը, փոքր կտրները մեծ մասամբ յաշող են, իսկ երբեմն՝ նաեւ կատարեալ:

Ի՞նչ է այս երեւայրի հիմնական պատճառը, ինչո՞ւ այլպիսի անհաւասարութիւն, երբ հեղինակը տէք է անվիճելի տաղանդի: Առաջին տպաւրուրիւնից, իրեւ պատճառ, կարելի է մատնանշել նախ՝ գրական մշակոյրի պակաը, որ կարող է վերացւել միայն դասական հեղինակների լուրջ ու բազմակողմանի ուսումնասիրութեամբ. բնական տաղանդը դեռ բաւական չէ, ամերաժեշտ է եւ մշակել ու զարգացնել այդ տաղանդը գիտական յանառ ու սեւական աշխատանքով: Երկրորդ, ինչպէս ասացինք, Պէշիկրաշլեանը գրում է շատ առան իւխսա անապարանեռով, օրը օրին, հեւ ի հեւ, առանց գրածը նորից ու նորից

սրբազրելու, վերամշակելու ու յդկելու։
Մարդ երբեմն ջզայնանում է, իիւրեղ
ու գեղցիկ էշերից յետոյ կարդալով,՝
յանկարծ, անհամ ու աննաշակ կտոր-
ներ, որոնք չեն հաշտուում հեղինակի
գրական կարողաւրեան հետ։

Այս նկատուուրիւնը ընդիմանուր է Պէշիկրաշլեանի՝ ստեղծագործութեան
համար. ժամակը նրա մօս յանախ վը-
նասում է որակին։ Գալով այս գրախօ-
սականի նիւրը կազմող հատորին՝ պէտք
է ասել, որ մատնանշչած քերութիւնը
այստեղ ամենից ժիշ է երեւան գալիս։
«Ծաղրանկարներ»-ը ակնյայտնի յառաջ-
դիմուրին են այս տեսակիտից։ Հա-
տորը հարուստ է յաջողուած երգիծա-
կան գործերով, որոնք, մեծ ժամանք,
առանց աւելորդ գգգումների, առանց
ծայրայիղ չափազանցութիւնների, նը-
տացւած ամբողջութիւն են կազմում։
արդիւնք իսկական ներշնչումի, սրամին
դիտողութիւնների եւ իրացումների։

Երգիծական գրականութեան մէջ ա-
մենն կարեւորը նիւրի յատկանշական
կողմերը տեսնելն ու սուր արտայայ՝
տուրթիւններով ներկայացնելն է։ Պէշիկ-
րաշլեանը առատօրէն օժտուած է այդ
կարողութեամբ։ «Ծաղրանկարներ»-ում
ներկայացւած դէմքերի մեծ մասը իրա-
կան պատկերներ են՝ բնաւորութեան
յստակ գծերով ու վիճակներով։ Առէք
«Կար. Բասմաշեան»-ը, օրինակի հա-
մար, որ, մեր կարծիքով, հատորի ա-
մենն յաջողուած կտորն է. Պէշիկրաշ-
լնանը տել է կենդանի եւ խօսուն մի
տիպ, որ արժանի է. Յ. Պարոնեանի
«Ազգային Զոշեր»-ի շարքում տեղ գը-
րաւելու։ Իսմ «Արշակ Զոպանեան»-ը,
նոյնիքան բնական ու կենդանի։

«Զոպանեան ամէնի բանի համար կրսէ
իրաւամբ՝ «Ե՛ս ըրի, ե՛ս ըսի, ե՛ս զը-
տայ»։

«Սարքւած է իր յորելեամբ՝
«Անոր համար ալ կրմայ ըսիլ նոյնիք»։

Ճի՞շտ բուն կէտին է զարկել Պէշիկ-
րաշլեանը։

Հապա սա «Վահան Մալեզեան»-ին
նայեցէ՛ք. —

«Ամսական՝ տասը հազար ֆրանֆ։

«Եւ այսկան»։

Ճիշտ եւ նիշտ Պարոնեանի՝ «Մզգիր-
մը շինած է»։ Միայն Պէշիկրաշլեանը
ֆրանֆի անկումը հաշվի չի առել. պէտք
է ասէք՝ «ամսական 17,500 ֆրանֆ»։ Զէ՞
որ Բարեգործականի վարիչ – տնօրինը
սրբակինով է գանձում իր ամսականնե-
րը…

Շատ յաջող է եւ «Վահան Թէ՛քէա-
ն»-ը, որ «կոնկած է իր աչքերը, ա-
կանչներն ու ժիրը եւ նոզին»։ «Կոն-
կած հոգի» Թէ՛քէանը ինչն է — «աշ-
խարի առաջին կեսարացին, որ կը փոր-
ձէ առաջին կեսարացին տուն մը ինմենել ու չի
յաջողիր։ Կըլլայ վէնի վանառական»։

Նաև՝ «Վահարամ Թարուլ»-ը — կը
նմանի շարած մարդու մը, որ կեցած
է խունամբոխ հրապարակի մը մէջ ու
չի զիսիք, թէ ո՞ր նամբան բռնելու է
հասնելու համար «Մեղրի Կարաս» փո-
ղոք։

«Զապէլ Եսայեան», սակայն, գտաւ
«Մեղրի Կարաս» փողոցը, առանց շա-
րեկու. . . Պէշիկրաշլեան նոյնախիս գու-
նագեղաւրեամբ գծել է եւ այդ «մանչ -
աղջիկ»-ի պատկերը։

Ընդհանրապէս զրական եւ խիստ կծու
են Ա. Խատիսեանի, Դերասան Շահիմա-
րուսիի, Մ. Պէրպէրեանի, Հ. Ալեա-
նաֆի, Հ. Երւանդի, Ա. Ալպոյանեան-
ի բնուրագիրը՝ լի սրամիտ արտա-
յայտութիւններով ու վառվուն աշխո-
ճուր բեամբ։

«Շաւարշ Նարդունի»-ին նւիրած տո-
ղերը «քարեկամական» են, թէեւ նոյն-
պէս զերծ չեն պղպեղից։

«Օր մը խօսակցութեան մէջ ըստ.

« — նս դաշնակցական եմ։

« — Գրէ՛ դաշնակցական ըլլալդ։

« — Ո՞ւր գրեմ...

« — Վա՞ս գրէ : —

Հասորի երկրորդ մասը բաղկացած է մանր դիմապատկերներից ու փոքրիկ պատմութիւններից — աւելի լրագրական, ընթացիկ բնոյր կրող, քերեւ կտորներ, որոնք, ընդհանրապէս, զըրքի արժեքի վրա առանձին բան չեն աւելացնում։ Գրքի հիմնական, մնայուն բովանդակութիւնը վերեւ յշշւած բնութագրերն են, որոնց վարպետն է Պէշիկ-րաշլեանը և որոնցից մի մասը պէտք է ապրի մեր գրականութեան մէջ Յ. Պարոնեանի «Զօցեր»-ի կամ Յ. Օսեանի հերոսների հետ։

Ն. Պէշիկ-րաշլեանը Պարոնեանի և Օսեանի գործի շարունակողն է մեր մէջ, անհամեմատ աւելի դժւարին հանգաւանքներում։ Պարոնեանն ու Օսեանը հող ունենի իրենց ոտքերի տակ և կենդանի միջավայր ու կենցաղ շուրջը — անհրաժեշտ պայմանը երգիծական գրականութեան գոյութեան։ Պէշիկ-րա-

լեանը գուրկ է կենսաւու հողից, իսկ միջավայրը խիստ սահմանափակ է։ Դըրանով պէտք է բացատրել գլխաւորապէս նրա ստեղծագործութեան շրջանակի համեմատական նեղութիւնն ու մշակած ներքի միանմանութիւնը։ Թերեւս, մասամբ դրանով է բացարուում եւ այն, որ Պէշիկ-րաշլեանի գրականութիւնը փիլիսոփայական եւ ընկերային ժաղակական խորութիւն ու լայն հորիզոններ չունի։ Յ. Պարոնեանի գրաւծեները կարդալուց յետոյ գրերէ միշտ, Օսեանի գրաւծեներից յետոյ յանախ լուրջ ապրունենք ես ունենում — մտածում ես շատ բաների մասին։ Պէշիկ-րաշլեանը աւելի ծիծաղեցնում է, քան ապրեցնում։ Տղովեալ հարցեր սովորաբար չի դնում առջեւդ, և պատասխաններ չի խնդրում ու չի տալիս։ Մինչդեռ իսկական երգիծանքը միշտ նպատակաւոր է — ծաղրում է մի բան՝ պաշտպանելու համար մի ուրիշ բան։

Ս. Վ.

ԲԵՆ. ՆՈՒՐԻԿԱՆԻ «Այգեկութեան» վեստ նիւ եսք, 1937

Ահա մի զիրք եւս, որ տեղ պէտք է բռնի արտասահմանի հայ գրասէրի մատենադարանում։ «Այգեկութեան» կարճ պատմւածքների ժողովածուն է, որի հեղինակը՝ Խարքերդի Հիւսէյնիկ գիւղացին՝ իր ծննդավայրը է ներկայացնում այնպէս յուղիչ ու կարօտով։ Իրաւունք ունի Յ. Աւագեանը «Յառաջարան»-ում «Խանդավառութեամբ յանձնարարելու» հասորը։ Բ. Խուրիկեանը արժանի է նըման յանձնարարութեան։

Համաստեղի պէս՝ Բ. Խուրիկեան էլ իր հայրենի գիւղն է երգում, գրական անկենծ ներշնչումով ու արևետով։ Երբէ, մի կողմից, Խուրիկեանը Թլկատինցիի աշակերտն է, միւս կողմից, Շարսին լաւ իմաստով, հետեւողն է Համաստեղի։ որի ներկայութիւնը զգացնում է «Այգեկութեան» շատ էջերից։

Մի հանգամանք, սակայն, որ բնաւ չի նւատացնում նուրիկեանի գործը։

Նուրիկեանի հստորք բաղկացած է շուրջ վեց տասնեակ պատմւածքներից՝ բաժանած երեք մասի՝ «Գիւղը որ կապրէ», «Անուշ երկիր ազառութեան» և երկու «տպաւորութիւններ» Թլկատինցիի մասին։ Բոլորն էլ կարճ կտորներ — ամենաերկարը 10 — 12 էջնոց — բայց լիցուն ու լիարժեք։ Նուրիկեանը զիտէ ժիշ խօսենակու ու հակիրճ տողերով ազգելու եւ ապրեցնելու արևետը։ Զի սիրում աւելորդաբնութիւններ եւ բաներն ու պատկերները վարպետորէն դընում է նիշտ իրենց տեղը։ Ասում է էկական եւ մի բանի խօսենով։ Կարդացեք նրա «Տղու մը օրագիրը» — մի ամբողջ վեպ։ Եւ ինչքան հոգերանօրէն նիշտ զարգացած։ Կարդացեք «Հեղ մը օրագիրը» — մի ամբողջ վեպ։